

տուեալներ չունի ճշգրտու համար անոր պաշտօնավարութեան ժամանակամիջոցը: Բացի վերոգրեալ յիշատակարանէն՝ ուրիշ ոչ մէկ վաւերագիր կը յիշատակէ իր անունը:

Միայն Վասպուրականի Մոկս գիւղաքաղաքին Ս. Աստուածածին եկեղեցին ունէր արձանագրութիւն մը, զոր Խ. Լեւոնեան հրատարակած է (Թիւզանդիոն, Թ. 2196):

Այս արձանագրութեան մէջ կ'ըսուէր.

«ԻԱ յոբելիցին, Բառեակ հերեալ ի նմին նորոգեցաւ Տանարս կուսին ձեռամբ մեղօք մեռեալ Ա...քին ի ժամանակին Տ. Յովհաննէսին ՌձԻՁ (=1677):

Արդ, Հ. Ներսէս վրդ. Ակինեան կ'ենթադրէ, թէ յիշուած Յովհաննէսը պէտք է ժամանակին Աղթամարի կաթողիկոսը եղած ըլլայ, քանի որ «ի ժամանակին» մը կայ անոր անուան առջև: Ենթադրութիւն՝ որ քնաւ հաւանական է, նախ անոր համար որ ճիշդ նոյն թուականին Կարապետ կաթողիկոս մը կը յիշուի նոյն աթոռին վրայ և երկրորդ՝ անոր համար, որ ըստ այս ձեռագիրին՝ անիկա 1678ին Հապէշիստան երթալու համար, 1677ին առնուազն արդէն պէտք էր հեռացած ըլլար Վանէն:

Արդարեւ՝ կը հաստատուի, թէ Յովհաննէս Թիւթիւնձի, որ ինքզինքը կը կոչէ «արքեպիսկոպոս Շամիրամակետոս» դեռ 1678—1680 թուականներուն, արդէն 1675ին թողած էր Վանի առաջնորդութիւնը, վասնզի ըստ յիշատակագրութեան մը (տես Դիւան Հայոց Պատմութեան, Ժ. հտ. էջ 106) այդ թուականին արդէն Վանի առաջնորդ էր Յովաստփ վրդ. Ղազանցի, որուն յաջորդած է 1679ին Կարապետ վրդ. Մուկացի, աշակերտը Ապարանցի Կարապետ վարդապետին, որ Կալօյ կը կոչուէր: